

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|----|
| Նախաբան..... | 3 |
| 1. Աշխատանքային խմբերի ձևավորում..... | 4 |
| 2. Միջազգային փորձի ուսումնասիրություն (բենչմարքինգ)..... | 5 |
| 3. Համապատասխան ոլորտի ՀՀ հիմնական շահակիցների կարիքների վերհանում | 5 |
| 4. ՄԿԾ-ի առաքելության, նպատակների, խնդիրների և ակնկալվող ուսումնառության արդյունքների սահմանում: | 6 |
| 5. Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ), շահակիցների կարիքների և ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների համաձայնեցում (vertical alignment I): | 7 |
| 6. ՄԿԾ-ի ուսումնական պլանի և բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքների ու բովանդակության մշակում | 8 |
| 7. ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և դրա բաղադրիչների ուսումնառության արդյունքների համաձայնեցում (vertical alignment II)..... | 9 |
| 8. ՄԿԾ-ի միավորների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանության սահմանում (horisontal alignment): | 9 |
| 9. ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների սահմանում և առկայության գնահատում:..... | 10 |
| 10. ՄԿԾ-ի քննարկում համալսարանական մակարդակում և հիմնական շահակիցների հետ (նախագծի վերջնականացում):..... | 11 |
| 11. ՄԿԾ-ի հաստատում գիտական խորհրդի կողմից: | 11 |

Նախարան

Ձեռնարկը մշակվել է ՏԵՄՊՈՒՄԻ «Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակների միջև համապատասխանության ապահովում և ստուգում (ALIGN)» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ձեռնարկն ուղղված է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում (ԵԳՊԱ) մասնագիտության կրթական ծրագրեր և առանձին դասընթացներ կամ մոդուլներ մշակող մասնագիտական խմբերին ու առանձին դասախոսներին: «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀՀ ՈԱՇ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»-ի և ԵԳՊԱ ուսանողի գնահատման համակարգի հետ միասին ձեռնարկը նպատակ ունի համակարգել ԵԳՊԱ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ), ինչպես նաև արտաքին շահակիցների պահանջների համապատասխանության գործընթացը: Ձեռնարկը միտված է նաև համապատասխանեցման միջոցով նպաստել ԵԳՊԱ-ում գործող և նոր մշակվող ՄԿԾ-երի միջազգայնացմանը և որակի բարձրացմանը:

Ձեռնարկը ներառում է ՀՀ ՈԱՇ-ին ու մասնագիտական ոլորտի հիմնական շահակիցների կարիքներին կրթական ծրագրերի համապատասխանեցման գործիքները և ԵԳՊԱ-ում նոր ՄԿԾ-ների մշակման և գործող ՄԿԾ-ների վերանայման ընթացակարգը:

ԵԳՊԱ-ում մասնագիտության կրթական ծրագրի մշակման կամ վերանայման գործընթացի հիմնական փուլերն են.

1. Աշխատանքային խմբերի ձևավորում:
2. Միջազգային փորձի ուսումնասիրություն (բենչմարքինգ):
3. Համապատասխան ոլորտի ՀՀ հիմնական շահակիցների կարիքների վերհանում:
4. ՄԿԾ-ի առաքելության, նպատակների և ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքների սահմանում:
5. Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ), շահակիցների կարիքների և ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների համաձայնեցում (vertical alignment I):
6. ՄԿԾ-ի ուսումնական պլանի և բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքների ու բովանդակության մշակում (մոդուլների, դասընթացների, պրակտիկաների և ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող այլ կրթական միավորների, դրանց տրամաբանական հաջորդականության, հատկացվող կրեդիտների և ուսումնառության վերջնարդյունքների սահմանում):
7. ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և դրա բաղադրիչների ուսումնառության արդյունքների համաձայնեցում (vertical alignment II):

8. ՄԿԾ-ի միավորների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանության սահմանում (horisontal alignment):
9. ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների սահմանում և առկայության գնահատում:
10. ՄԿԾ-ի քննարկում համալսարանական մակարդակում և հիմնական շահակիցների հետ (նախագծի վերջնականացում):
11. ՄԿԾ-ի հաստատում գիտական խորհրդի կողմից:

ՄԿԾ մշակման և վերանայման գործընթացի հիմք պետք է հանդիսանա «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀՀ ՈԱՇ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ»-ը (տես՝ *Հավելված 1*), իսկ արդյունքում մշակված ՄԿԾ-ները պետք է ձևակերպվեն ԵԳՊԱ գիտական խորհրդի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 28-ին կայացած նիստում հաստատված «Մասնագիտական կրթական ծրագրի նկարագրի» և «Դասընթացի/մոդուլի նկարագրի» ձևաչափերին համապատասխան (տես՝ *Հավելված 2 և Հավելված 3*):

1. Աշխատանքային խմբերի ձևավորում

ՄԿԾ-ների մշակման կամ վերանայման գործընթացում կարևոր դեր են խաղում այդ գործընթացը իրականացնող մասնագետների ոչ միայն տվյալ բնագավառում ունեցած մասնագիտական ունակություններն ու փորձը և նվիրվածությունը աշխատանքին, այլ նաև կրթության կառավարման և արդի կրթական միտումների իմացությունը: Հետևաբար ՄԿԾ-երի մշակման և/կամ վերանայման աշխատանքային խմբերում ընդգրկվում են հաստատության տվյալ ոլորտի (թողարկող և հարակից ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի) և կրթական արդի միտումներին քաջատեղյակ (վարչական անձնակազմ) մասնագետներ, որոնցից մեկն ընտրվում է որպես խմբի ղեկավար և աշխատանքների համակարգող: ԵԳՊԱ-ում ՄԿԾ-ների մշակման կամ վերանայման նպատակով ստեղծվող աշխատանքային խմբերում ներգրավվում են տվյալ մասնագիտության թողարկող և հարակից ամբիոնների 4-5 առաջատար մասնագետներ՝ որոնց թեկնածությունները առաջադրում է թողարկող ամբիոնի վարիչը, մեկ ուսումնական վարչության մասնագետ՝ որի թեկնածությունը առաջադրում է ուսումնական վարչության պետը, և 1-2 ուսանող՝ որոնց թեկնածությունը առաջադրում է ուսանողական խորհուրդը որակի ապահովման ուսանողական խմբի կազմից: Աշխատանքային խումբը մշակում է ՄԿԾ-ի մշակման/վերանայման գործողությունների ժամանակացույց: Աշխատանքային խմբի կազմը, և գործողությունների ժամանակացույցը հաստատվում է ԵԳՊԱ ռեկտորատի նիստում, ինչի արդյունքում խմբին շնորհվում է պաշտոնական կարգավիճակ, տրվում են անհրաժեշտ լիազորություններ և նյութական ռեսուրսներ:

2. Միջազգային փորձի ուսումնասիրություն (բենչմարքինգ)

Նոր ՄԿԾ-ներ մշակելիս կամ գործող ՄԿԾ-ները վերանաելիս կարևոր է հաշվի առնել շահակիցների կողմից տվյալ մասնագիտության շրջանավարտներին ներկայացվող պահանջները և միջազգային նմանատիպ բուհերի փորձը: Օտարերկրյա առաջավոր ուսումնական հաստատությունների դրական փորձի փոխառությունը ենթադրում է բենչմարքինգի իրականացման գործընթաց */Հավելված 5/*:

Բենչմարքինգը համակարգված գործընթաց է, որը ենթադրում է կրթության ոլորտում լավ փորձի, նորարարական գաղափարների և արդյունավետ ընթացակարգերի որոնում, փոխառում և տեղայնացում, որոնք կնպաստեն ուսումնառության գործընթացի կատարելագործմանը և բուհի առաքելության իրականացմանը: Բենչմարքինգի իրականացման հիմնական փուլերը բերված են *Հավելված 4* – ում:

Համեմատական վերլուծության մեջ առանձին-առանձին ներկայացվում են հաստատությունների տվյալները, նմանությունները և տարբերությունները տվյալ հաստատությունում իրականացվող ՄԿԾ-ի համեմատ, առավելությունները (առկայության դեպքում), փոխառության ենթակա միավորները (ՄԿԾ-ի նպատակները, ուսումնառության արդյունքները, դասընթացները, մոդուլները) կամ գաղափարները ու դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները: Վերլուծության վերջում կատարվում են առաջարկներ՝ ՄԿԾ-ի վերանայման համար:

3. Համապատասխան ոլորտի ՀՀ հիմնական շահակիցների կարիքների վերհանում

Ոլորտի հիմնական շահակիցների կարիքները վերհանելու համար նախևառաջ անհրաժեշտ է դուրս բերել դրանց ցուցակը: Այդ նպատակով աշխատանքային խումբը համագործակցելով ԵԳՊԱ Կարիերայի և Որակի ապահովման կենտրոնների հետ: Կապ է հաստատում տվյալ ոլորտի մասնագիտական միությունների հետ (առկայության դեպքում) և խորհրդակցելով դրանց հետ կազմում է ոլորտի հիմնական շահակիցների ցուցակը: Բացի մասնագիտական միությունների կողմից նշված կազմակերպություններից ցանկում ներգրավվում են տվյալ ոլորտյամբ ԵԳՊԱ-ի հետ անմիջականորեն ակտիվ համագործակցող գործատուները և այլ մասնագիտական կազմակերպությունները: ԵԳՊԱ-ի համար որպես մասնագիտական միություններ կարող են դիտարկվել նկարիչների, դիզայներների, ճարտարապետների միությունները, ինչպես նաև ՀՀ գործատուների միությունը ու ՀՀ արդյունաբերողների և գործարարների միությունը: Գործատուների հետ կազմակերպվում են հանդիպումներ, ֆոկուս խմբեր և հարցումներ, որոնց արդյունքում վեր են հանվում հիմնական կարիքները տվյալ ՄԿԾ-ի շրջանավարտների նկատմամբ: Հանդիպումների, ֆոկուս խմբերի և հարցումների անցկացումը և ստացված արդյունքների ամփոփումն ու վերլուծությունը իրականացվում են ԵԳՊԱ որակի ապահովման կենտրոնի

մասնակցությամբ: Ֆոկուս խմբերի անցկացման ուղեցույցը և շրջանավարտների կարիքների վերհանման հարցաշարի օրինակը բերված են Հավելվածներ 6-ում և 7-ում:

4. ՄԿԾ-ի առաքելության, նպատակների, խնդիրների և ակնկալվող ուսումնառության արդյունքների սահմանում

ՄԿԾ-ի առաքելությունը, նպատակները, խնդիրները և ուսումնառության արդյունքները կարող են հանդիսանալ օգտակար ուղեցույց շահառուների համար և ապահովել արդյունքների համադրելիությունը ՈԱՇ-ի, մասնագիտական ոլորտների և դասընթացների միջև: ՄԿԾ-ի առաքելությունը, նպատակները, խնդիրները և հատկապես ուսումնառության ակնկալվող արդյունքները սահմանելիս կարևոր է հաշվի առնել բենչմարքինգի իրականացման և հիմնական շահակիցների կարիքների վերհանման արդյունքները:

Առաքելությունը՝ սահմանում է հաստատության կամ ֆակուլտետի արժեքների և փիլիսոփայության ամբողջական տեսլականը: **Նպատակները**՝ ընդհանրական հայտարարություններ են շրջանավարտների գիտելիքների, հմտությունների, դիրքորոշումների և արժեքների վերաբերյալ: **Խնդիրները**՝ պարզ, հակիրճ հայտարարություններ են, որոնք նկարագրում են, թե ինչպես ուսանողները կարող են դրսևորել իրենց տիրապետումն ծրագրի նպատակներին:

ՄԿԾ-ի առաքելությունը և նպատակները լայն են, մինչ դեռ խնդիրները հատուկ քայլեր են, որոնք տանում են առկա վիճակից դեպի սահմանված նպատակը: Խնդիրները՝ այն չափելի մտադրություններն են, որոնք հայտարարվում են կրթական ծրագրի մշակողների կողմից: ՄԿԾ-ի խնդիրները պետք է.

- Կենտրոնացած լինեն՝ թե ինչ ուսանողը կսովորի, այլ ոչ թե ինչ ծավալ կմատուցվի դասախոսների կողմից:
- Նկարագրեն, թե ինչպես ուսանողը պետք է ցույց տա նախապես սահմանված գիտելիքների, հմտությունների և արժեքների ձեռքբերումը:
- Լայնորեն տարածվեն ներկայացվելով՝ կրթական ծրագրերում, ձեռնարկներում, համացանցում /կայքէջում:
- Հայտնի լինեն բոլոր խոշոր շահառուներին, ներառյալ հիմնական և ոչ հիմնական (համատեղություն, ժամավճար) պրոֆեսորադասախոսական կազմը, դեկանը և տեղակալը, ուսումնաօժանդակ կազմը և ուսանողները:
- Դասընթացները և ուսումնական պլանը կազմվեն այնպես, որ ուսանողի համար կազմեն կապակցված կրթական ծրագիր:
- Հիմք հանդիսանան դասընթացների և մոդուլների կրթական նպատակների մշակման համար:
- Քաջալերեն ուսանողին հանդիսանալ գիտակցող ուսումնառող (intentional learner), ով ուղղորդում և վերահսկում է իր սեփական ուսումը:

- Քաջալերեն դասախոսին հանդիսանալ գիտակցող դասախոս (intentional teacher), ով այլ դասախոսների և ուսումնասովանողակ կազմի հետ համագործակցելով ապահովում է ուսանողի կապակցված ուսումնասությունը:

Ուսումնասության արդյունքները արտահայտում են ուսումնասության գործընթացի արդյունքը: Դրանք չափելի ձեռքբերումներ են և սահմանվում են որպես ուսանողի ձեռքբերումներ: Ուսումնասության վերջնարդյունքները պետք է սահմանեն ուսանողի կարողությունների նվազագույն ընդունելի մակարդակը: Հստակ սահմանված ուսումնասության վերջնարդյունքները կոգնեն ուսանողներին հասկանալ, թե ինչ է նրանցից ակնկալվում, և կոգնեն դասախոսներին կենտրոնանալ այն բանի վրա, թե ինչին նրանք պետք է հասցնեն ուսանողներին: Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնասության արդյունքները սահմանում են, թե ինչ պետք է գիտենա, հասկանա, կարողանա անել ուսանողը մասնագիտության կրթական ծրագիրը բարեհաջող ավարտելուց հետո: ՄԿԾ-ի առաքելության, նպատակների, ինդիկատորների և ուսումնասության արդյունքների օրինակները բերված են **Հավելված 8-ում**: Ուսումնասության արդյունքների մշակման յուրահատկությունները մանրամասնորեն ներկայացված են «ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՀՀ ՈԱՇ-Ի ՄԻՋԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԵՅՈՒԹՅՈՒՆ»-ում:

5. Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ), շահակիցների կարիքների և ՄԿԾ-ի ուսումնասության արդյունքների համաձայնեցում (vertical alignment I)

ՀՀ Որակավորման ազգային շրջանակում (ՈԱՇ) սահմանվում են ընդհանրական ուսումնասության արդյունքների նկարագրերը յուրաքանչյուր կրթական մակարդակի համար: ՈԱՇ-ը ընդհանուր կողմնորոշիչ համակարգ է, որը կապում է տարբեր որակավորումների մակարդակները միմյանց ստորակարգության սկզբունքով՝ ամենացածրից մինչև ամենաբարձրը:

ՈԱՇ-ը ցուցաբերում է նոր մոտեցում «որակավորում» հասկացությանը՝ առաջնային նշանակություն տալով ուսումնասության արդյունքներին, և կարևորելով նախ և առաջ այն, ինչ անձը պետք է գիտենա և կարողանա անել, որի արդյունքում իրեն պետք է շնորհվի համապատասխան որակավորման աստիճան, և ոչ թե այն, թե որքան ժամանակ է ծախսել և ինչ բովանդակություն է ուսումնասիրել սովորողը տվյալ ծրագրի յուրացման համար: ՀՀ ՈԱՇ-ը ներկայացված է **Հավելված 9-ում**:

Մասնագիտության կրթական ծրագիրը մշակելիս կամ վերանայելիս սահմանվող ուսումնասության արդյունքները պետք է համադրելի լինեն ՈԱՇ-ով այդ մակարդակի համար սահմանված նկարագրիչների հետ, ինչպես նաև հաշվի առնեն բենչմարքինգի իրականացման և հիմնական շահակիցների կարիքների վերհանման արդյունքները:

Որակավորման ազգային շրջանակի նկարագրերին համապատասխան ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները մշակելու համար անհրաժեշտ է օգտվել ՈԱՇ-ի և ՄԿԾ ուսումնառության արդյունքների համապատասխանեցման աղյուսակից (տես՝ **Հավելված 10**): Աղյուսակի մի կողմում բերված են ՈԱՇ-ից դուրս բերված պահանջները իսկ վերևում տեղադրվում են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները և քննարկվում է դրանց համապատասխանության մակարդակը: Գործընթացի այս փուլը զուգակցվում է ներքին և արտաքին շահակիցների լայն շրջանակի հետ քննարկումներով, որի արդյունքում կատարվում է ուսումնառության արդյունքների վերջնականացումը: ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները այս փուլում պետք է ներառեն ՈԱՇ-ի և շահակիցների պահանջները ու միջազգային փորձը:

6. ՄԿԾ-ի ուսումնական պլանի և բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքների ու բովանդակության մշակում

ՄԿԾ-ի մշակման կամ վերանայման այս փուլում սահմանվում է կրթական ծրագրի բովանդակությունը և դրա զարգացման քարտեզը: Հաշվի առնելով ՄԿԾ-ների բովանդակության (պարտադիր դասընթացների) վերաբերյալ ՀՀ և ներբուհական ինստիտուցիոնալ պահանջները աշխատանքային խումբը սահմանում է այն դասընթացները, մոդուլները և այլ բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են ՄԿԾ-ի նախանշված ուսումնառության արդյունքներին հասնելու համար: Սահմանվում են դասընթացներին և ծրագրի այլ բաղադրիչների հերդականությունը, դրանց հատկացվող կրեդիտները, ինչի արդյունքում ձևավորվում է ծրագրի ուսումնական պլանը: Բակալավրի և մագիստրոսի ուսումնական պլանների օրինակները բերված են **Հավելվածներ 11-ում և 12-ում**:

Ուսումնական պլանի կազմման կամ վերանայման ողջ ընթացքում աշխատանքային խումբը իր աշխատանքների արդյունքները քննարկում է ՄԿԾ-ն սպասարկող ամբիոնների դասախոսական կազմի հետ:

Ուսումնական պլանը կազմելուց հետո աշխատանքային խումբը ՄԿԾ-ն սպասարկող ամբիոններում մեկնարկում է ուսումնական պլանում ներառված բաղադրիչների մշակման առաջին փուլը: Յուրաքանչյուր դասընթացի մշակման համար համապատասխան ամբիոնում ստեղծվում է 2-4 մասնագետից կազմված աշխատանքային խումբ, որը համագործակցելով ՄԿԾ-ի աշխատանքային խմբի հետ հանդիպումներ է կազմակերպում ուսանողների, շրջանավարտների և այլ դասախոսների հետ դասընթացի ուսումնառության արդյունքները և բովանդակությունը քննարկելու և հստակեցնելու նպատակով: Դասընթացների ուսումնառության վերջնարդյունքները մշակելիս պարտադիր կերպով հաշվի են առնվում ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները: Դասընթացը մշակող խումբը պետք է ապահովի և ակնհայտ կերպով արտահայտի դասընթացի ուսումնառության արդյունքների կապը ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների հետ:

7. ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և դրա բաղադրիչների ուսումնառության արդյունքների համաձայնեցում (vertical alignment II)

ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների և դրա բաղադրիչների ուսումնառության արդյունքների համեմատության համար անհրաժեշտ է օգտվել ՄԿԾ/բաղադրիչ համապատասխանեցման աղյուսակից (տես՝ *Հավելված 13*): Աղյուսակի մի կողմում բերվում են ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները իսկ միյուս կողմում տեղադրվում են դասընթացները և քննարկվում է յուրաքանչյուր դասընթացի ներդրումը ՄԿԾ-ի այս կամ այն ուսումնառության արդյունքի ձևավորման համար: Այս գործընթացը կազմակերպելու նպատակով ՄԿԾ-ի մշակման խումբը կազմակերպում է բաց հանդիպումներ, որոնց պարտադիր կերպով ներկա են գտնվում ՄԿԾ-ի բաղադրիչների մշակման աշխատանքային խմբերը և ՄԿԾ-ն սպասարկող ամբիոնների այլ դասախոսները, ուսանողներ, ինչպես նաև կարող են ներկա գտնվել բոլոր հետաքրքրված շահակիցները: ՄԿԾ-ի բաղադրիչները մշակող յուրաքանչյուր խումբը ներկայացնում է իր դասընթացի նպատակը, ուսումնառության արդյունքները և դրանց ներդրումը ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների ձևավորման հարցում: Գործընթացի այս փուլում կարող են փոփոխության ենթարկվել ինչպես տարբեր բաղադրիչների ուսումնառության վերջնարդյունքները, այնպես էլ առաջարկություններ կատարվեն որոշ բաղադրիչները հանելու կամ նոր բաղադրիչներ ավելացնելու վերաբերյալ: Նոր բաղադրիչներ ավելացնելու անհրաժեշտության առաջացման դեպքում դրանց մշակման համար ստեղծվում են նոր աշխատանքային խմբեր: Հիմնվելով հանդիպումների ընթացքում կատարված խելամիտ առաջարկությունների վրա բաղադրիչների մշակման աշխատանքային խմբերը վերջնական տեսքի են բերում ՄԿԾ-ի յուրաքանչյուր բաղադրիչի ուսումնառության արդյունքները: Գործընթացի այս փուլի ավարտին ՄԿԾ-ի մշակման խումբը և հանդիպումներում ներգրավված շահակիցները պետք է համոզվեն, որ նախատեսվող բաղադրիչները (դասընթացները, մոդուլները) կապահովեն ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքների ձևավորումը ծրագրի ուսանողների կողմից:

8. ՄԿԾ-ի միավորների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանության սահմանում (horizontal alignment)

ՄԿԾ-ի մշակման/վերանայման գործընթացի այս փուլում սահմանվում է կրթական ծրագրի դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը և այդ մեթոդների համապատասխանությունը սահմանված ուսումնառության արդյունքներին:

ՄԿԾ-ի մշակման խումբը սահմանում է.

- ՄԿԾ-ում ընդգրկվելու (ընդունելության) պայմաններն ու պահանջները,
- դասավանդման և ուսումնառության քաղաքականությունը,
- գնահատման քաղաքականությունը,

- ավարտական աշխատանքների գնահատման չափանիշերը:

Նշված կետերը քննարկվում են ներքին շահակիցների շրջանում և հաշվի առնելով ստացված կարծիքներն և առաջարկությունները վերջնականացվում են:

Դասավանդման և գնահատման քաղաքականության սահմանումից հետո աշխատանքային խումբը ՄԿԾ-ն սպասարկող ամբիոններում մեկնարկում է բաղադրիչների (դասընթացների, մոդուլների) մշակման երկրորդ փուլը: Բաղադրիչների մշակման աշխատանքային խմբերը բաղադրիչների համար արդեն իսկ սահմանված ուսումնառության արդյունքներին համապատասխան սահմանում են դասավանդման մեթոդները, ուսանողներին հանձնարարվող առաջադրանքները և գնահատման ձևերը և չափանիշները ակնհայտ կերպով արտահայտելով դրանց կապը բաղադրիչի ուսումնառության արդյունքների հետ, ինչպես նաև սահմանվում են բաղադրիչների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական պայմանները (լաբորատորիաներ և դրանցում առկա սարքավորումները, անհրաժեշտ նյութերը, մասնագետները): Արդյունքում ամբողջությամբ վերջնականացվում են ՄԿԾ-ի բոլոր բաղադրիչների նկարագրերը ըստ ձևաչափի (տես՝ *Հավելված 3*): Մշակված դասընթացները/մոդուլները քննարկվում են ամբիոնի նիստում և հավանություն ստանալու դեպքում երաշխավորվում են ՄԿԾ-ում ընդգրկվելու համար:

Ամփոփելով տվյալ ուղեցույցի 4-8 բաժիններում նկարագրված գործընթացների արդյունքները ՄԿԾ-ի աշխատանքային խումբը վերջնականացնում է ՄԿԾ-ի նախագիծը, որպես արդյունք ունենալով ՄԿԾ-ի ամբողջ փաթեթը (*Հավելվածներ 2-ում* սահմանված ՄԿԾ-ի ձևաչափի և Հավելվածներ 3-ում սահմանված ՄԿԾ-ի բոլոր բաղադրիչների լրացված նկարագրերը):

9. ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսների սահմանում և առկայության գնահատում

ՄԿԾ-ի ամբողջական փաթեթի նախագիծը պատրաստելուց հետո ՄԿԾ-ի աշխատանքային խումբը ՄԿԾ-ի բաղադրիչների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային պահանջներից դուրս է բերում ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական, լաբորատոր և այլ ռեսուրսների ցանկը: Ուսումնասիրում է ԵԳՊԱ-ում առկա ռեսուրսները և դրանց զբաղվածությունը ու կազմում այն ռեսուրսների ցուցակը, որոնք անհրաժեշտ է ձեռք բերել նոր կամ վերանայված ՄԿԾ-ն իրականացնելու համար: Անհրաժեշտ ռեսուրսները և դրանց ձեռք բերման հնարավորությունը քննարկվում է ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորների հետ: Եթե ՄԿԾ-ի իրականացման համար զգալի ներդրումներ են անհրաժեշտ ապա ֆինանսատնտեսական բաժնի կողմից կազմվում է դրանց ձեռքբերման բյուջեի նախագիծը:

10. ՄԿԾ-ի քննարկում համալսարանական մակարդակում և հիմնական շահակիցների հետ (նախագծի վերջնականացում)

ՄԿԾ-ի նախագիծը ներքին և արտաքին շահակիցներին ներկայացնելու և դրա վերաբերյալ վերջնական արձագանք ստանալու նպատակով ՄԿԾ-ի մշակման խումբը բաց կոնֆերանս է կազմակերպում: Կոնֆերանսի վերաբերյալ հայտարարությունը տեղադրվում է ԵԳՊԱ-ի կայքէջում և դրան կարող են մասնակցել բուլոբ հետաքրքրված կողմերը: Կոնֆերանսին հրավիրվում են ներքին շահակիցները և տվյալ ոլորտում ԵԳՊԱ-ի շահակից հանդիսացող կազմակերպությունների ներկայացուցիչները: Կոնֆերանսի ներկայացուցիչներին ներկայացվում է ՄԿԾ-ի արդիականությունը, նպատակները, խնդիրները, ուսումնառության վերջնարդյունքները և դրանց կապը աշխատաշուկայի կարիքների հետ:

11. ՄԿԾ-ի հաստատում գիտական խորհրդի կողմից

Հաստատելու նպատակով ՄԿԾ-ն ներկայացվում է գիտական խորհրդի քննարկմանը: ԵԳՊԱ գիտական խորհրդի անդամներին ներկայացվում է ՄԿԾ-ի փաթեթը և իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ծավալը: ՄԿԾ-ն հաստատելու գործընթացը կազմակերպվում է գիտական խորհրդի կանոնակարգին համաձայն:

ՄԿԾ-ն հաստատելու դեպքում դրա իրականացման համար անհրաժեշտ ներդրումների նախահաշիվը ներառվում է ԵԳՊԱ-ի ֆինանսական ծախսերի նախահաշվում: